ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՐԱՐ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆինսախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 002

№ 01/9-2/1071-2025

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պապոյան

Ձեր 30.12.2024թ. N 01/26102-2024 գրությամբ ներկայացված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ պետական հիմնարկը վերակազմավորման ձևով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության «Գյուղական ֆինանսավորման կառույց» պետական հիմնարկի վերակազմակերպելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N 461-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ (այսուհետ՝ Նախագիծ) հայտնում ենք հետևյալը.

1. վերակազմավորման դեպքում պարտադիր պայման է կազմակերպաիրավական ձևի փոփոխությունը, սակայն Նախագծով փոփոխվում է միայն պետական հիմնարկի անվանումը, հետևաբար վերակազմակերպում փաստացի չի իրականացվում: Ավելին՝ նկատի ունենալով, որ հիմնարկներն իրավաբանական անձի կարգավիճակ չունեն, դրանց վերակազմավորման իրավական հնարավորությունն ինքնին բացակայում է:

2. Նախագծով բացահայտված չէ, թե ինչ միջոցների հաշվին է ապահովվելու ԳՖԿ-ի պահպանման ծախսերի ֆինանսավորումը:

3. Նախագծի N 1 հավելվածով հաստատվող կանոնադրության «2. Հիմնարկի գործունեության ոլորտներն ու նպատակները» բաժնում ԳՖԿ-ի գործառույթների և խնդիրների շարքում նաև ներկայացվել է, որ ԳՖԿ-ն միջազգային աուդիտորական կազմակերպությունների կողմից անցնում է տարեկան արտաքին աուդիտ (7-րդ կետի 13-րդ

ենթակետ): Այս կապակցությամբ, բացահայտման կարիք ունի ԳՖԿ-ի տարեկան արտաքին աուդիտ անցնելու վերաբերյալ դրույթը ԳՖԿ-ի գործառույթների և խնդիրների ներքո նախատեսելու հանգամանքը:

4. Միաժամանակ խմբագրական առումով հայտնում ենք.

ա/ Նախագծի նախաբանում որպես լիազորող նորմ հղում է կատարվում «Համայնքային կառավարչական հիմնարկների մասին» օրենքին, սակայն Նախագծով նախատեսված հարաբերությունները դուրս են տվյալ օրենքի կարգավորման առարկայի շրջանակներից:

բ/ Հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը, Նախագծի 7-րդ կետում անհրաժեշտ է նշել իրավական ակտի լրիվ անվանումը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Recoverable Signature

Ստորագրող
ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2903800432

X

2025-01-23 16:33:41 GMT+4
Հանձնարված է ԷԿՏԿ-ի կողմից

ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN VAHE 2903800432

Կատարող՝ Լ. Նալբանդյան Հեռ. 011800232